

Ատհայի տօնին առիթով եւ հաւանաբար լրագրողներու սեմտիքային լիբանանեան մամուլը արձակուրդ կ'անուէր Երկուշաբթի 10 եւ Երեքշաբթի 11 Փետրուարին: Եւ տեւաբար «Ազդակ» լոյս պիտի չտեսնէր Երեքշաբթի 11 եւ Չորեքշաբթի 12 Փետրուարին: Մեր լաշորդ քիւր՝ Հինգշաբթի, 13 Փետրուարին:

ԱԶԳԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 L.Ո. 75ԳԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 277 (21327) ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 10 ՓԵՏՐՈՒԱՐ 2003 10 ԷԶ

EXPO BEIRUT

ՊԵՏՐՈՒԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՏՈՒՐԻ 5ԳԳ ՑՈՒՑԱՀԱՆԳԵՍ ԶԵՂԶԻ ԱՄՍՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ 31 Յունուարէն 2 Մարտ, ամէն օր՝ կտօքտ ետք ժամը 4:00էն երեկոյեան ժամը 10:00: Մասնակցութեամբ՝ զանազան երկիրներու: Expo Beirut, Ain El-Mreissch 01/361040

ԻՐԱԸԻ ՏԱԳՆԱՊ

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ ՅԱԶՈՂԵՅԱՆ ԵՐՈՊԱԿԱՆ ՃԱԿԱՏ ՄԸ ՍՏԵՂԾԵԼ՝ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ԴԵՍ

Իրաքի դէմ ամերիկեան յարձակումի մը ծրագրիները գորակարար հարուած մը ստացան երէկ, երբ Ֆրանսայի առաջնորդութեամբ՝ եւրոպական երկիրներ յայտնեցին, թէ ծրագրին դէմ պիտի կանգնին ՕԹԱՆԻ եւ ՄԱԿի մէջ: Նոյն պահուն, իրաք շարժաթաղանջի նոր փաստաթուղթեր յանձնեց ՄԱԿի քննիչներուն: Գերմանիա եւ Ֆրանսա, որոնք կը մերժեն իրաքի դէմ պատերազմ մը, այս շարժումն մէջ միացեալ նախաձեռնութեամբ մը խաղաղարար ծրագրի մը պիտի առաջարկեն Ապահովութեան Խորհուրդին: Գերմանիոյ պաշտպանութեան նախարար Փիթըր Սթրաքը հաստատեց, որ Ֆրանսեակերմանական նախաձեռնութեամբ ծրագրի մը կը պատրաստուի՝ խուսափելու համար պատերազմի ընտրանքէն: Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով անմիջապէս յայտարարեց, թէ Մոսկուա վստահութեամբ պիտի համաձայնի առաջարկին, որ կը նպատակադրէ խաղաղ միջոցներով իրագործել իրաքի ապագինումը: Իվանով աւելցուց, որ Ռուսիա պատրաստակամ է զէնքերու իր մասնագէտները տրամադրելու օժանդակելու համար քննութիւններուն: Իվանով դիտել տուաւ նաեւ, որ Մոսկուա պիտի սպասէ մինչեւ յառաջիկայ Ուրբաթ օր, երբ գլխաւոր քննիչները Հանս Պիլքս եւ Մոնամէտ Պարատի Ապահովութեան Խորհուրդին պիտի ներկայացնեն իրենց երկրորդ արժեւորումի տեղեկագիրը: Փետրուար 14էն ետք է, որ Ռուսիա իր կեցուածքը պիտի յայտարարէ, աւելցուց Իվանով:



Չախէն աջ՝ Գախագահներ Մ. Զապաֆի, Լ. Մուպարաբ եւ Պ. Ասատ տեսակցութեան ընթացքին

ցուցած են չարտօնելու ՕԹԱՆԻ հաւանութիւնը զինուորական գործողութեան մը: Երեք երկիրները կը հաւատան, թէ զինանագիտութիւնը տակաւին առիթ ունի լուծելու իրաքի տագնապը: Աւելի ուշ, սակայն Ֆրանսա յայտարարեց, որ իրաքը ապագինելու ֆրանսեակերմանական գաղտնի ծրագրի մը գոյութիւն չունի: Սթրաքը ըսաւ նաեւ, որ Գերմանիա պատրաստ է մաս կազմելու ՄԱԿի խաղաղարար ուժի մը, եթէ այդպիսի որոշում մը տրուի միջազգային կազմակերպութեան կողմէ:

Միացեալ Նահանգներու գլխաւոր դաշնակից Բրիտանիա անմիջապէս հակադրեց քննադատելով ֆրանսեակերմանական նախաձեռնութիւնը: Չինեալ ուժերու նախարար Ատամ Ինկրամ ըսաւ, որ յառաջիկայ կարելի չէ արձանագրել ժամանակ տարով Սատտամ Հիւսէյնի: Ինկրամ աւելցուց, որ յառաջիկայ թիւն կ'արձանագրուի պարզապէս այն ատեն, երբ իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյն կ'ենթարկուի Ծար.ը՝ էջ 10

ՄԱՐԳԱՍԵԱՆ ԵՒ ԴԱՐՔԻՆԵԱՆ ՅԵՏԱ ԿՈՉԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

Փետրուար 19ին կայանալիք Հայաստանի նախագահական ընտրութիւններուն 2 թեկնածուներ Շարաթ, 8 Փետրուարին հրաժարեցան իրենց թեկնածութենէն՝ ի նպաստ այլ թեկնածուներու: Նախկին վարչապետ, Հանրապետութիւն Կուսակցութեան թեկնածու Արամ Չ. Սարգսեան յայտարարեց, թէ կը հրաժարի իր թեկնածութենէն ի նպաստ Հայաստանի Ժողովրդական Կուսակցութեան թեկնածու Ստեփան Դեմիրճեանի: Ան նշեց, թէ ընտրապայքարէն կը քաշուի «նախագահ Ռուպէրթ Քոչարեանի պարտութեան կը քաշուի ինչպէս որ քաշուի ինչպէս որ քաշուի» ընտրութեան նախագահ Վաչագան Մանուկեան պատճառաբանած է, թէ հաւանականութիւնը անլիցնելու համար: Ան յայտարարեց, որ միւս թեկնածուներն ալ կը հետեւին իր օրինակին: Արամ Չ. Սարգսեանէն առաջ ընտրապայքարէն քաշուած էր Հայաստանի Հանրապետական Կուսակցութեան ղեկավար Վլատիմիր Գարբիճեան: Ան իր թեկնածութիւնը քաշած էր յօգուտ Ազգային Միասնութիւն Կուսակցութեան ղեկավար Արտաշէս Գեղամեանի: Հակառակ անոր որ այլ թեկնածուներ եւս կրնան

քաշուի ընտրապայքարէն, երեք ընդդիմադիր թեկնածուներ՝ Արտաշէս Գեղամեան, Վաչագան Մանուկեան եւ Արամ Կարապետեան յայտնեցին, թէ պիտի շարունակեն ընտրապայքարը: Ըստ «Ապստոյն» ռատիոկայանին, Ազգային Միասնութիւն Կուսակցութեան ղեկավար Արտաշէս Գեղամեան յայտնած է, թէ չ'ուզէր «հիւսքափուր թիւ պատճառով հարիւր հազարաւոր մարդոց, որոնց մօտ յոյս եւ հաւատք առած է»:

Իր կարգին, Ազգային Ժողովրդական Կուսակցութեան նախագահ Վաչագան Մանուկեան պատճառաբանած է, թէ «երեք կամ չորս թեկնածուներու գոյութիւնը պիտի չ'ընդհատուի»:

● ՄՐՏԱՍ քաղաքին մէջ 4 Փետրուարին կայացած նախընտրական հաւաքին ընթացքին թեկնածու Արամ Կարապետեանի նախընտրական աշխատանքի ղեկավար Հայկ Բարսիլեանի դաշունահարման առնչութեամբ ձեռքարկուած է Արարատ քաղաքի բնակիչ Գրիգոր Օհանեան: Ան խոստովանած է իր մեղսակցութիւնը՝ միջադէպին:

● ՌԻԲԱԹ, 7 Փետրը-

ԱԶՐՊԵՅՃԱՆ ԿԸ ՓՈՐՁԵ ԶԵՐՔԵԼ...

Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վլադիմիր Կուլիբե արձագանգեց Հայաստանի իր պաշտօնակից՝ Վարդան Օսկանեանի Փարիզի մէջ կատարած յայտարարութեան: Նախարար Օսկանեան յայտարարած էր, թէ Ազրպէյճան կը քանդէ նախիջեանի մէջ գտնուող Հայկական պատմամշակութային կոթողները: Կուլիբե նշած է, թէ «Ազրպէյճան պատրաստ է ընդունելու ԵՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցիչներ, փաստելու համար, թէ Վարդան Օսկանեանի պնդումները կեղծիք են»:

Միւս կողմէ, նախիջեանցի պատմաբան, պատմական գիտութիւններու թեկնածու, «մասնագէտ» Վալի Բախսալիե յայտնած է, թէ «Նախիջեանի մէջ Հայկական կոթողներ չկան. այդ տեսակի յայտարարութիւնները միջազգային ընտանիքը մոլորեցնելու փորձեր են»:

Բախսալիեի համաձայն, «Հին ժամանակներէն մինչեւ այսօր կատարուած հնաբանական ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ Նախիջեանի մէջ Հայերու առնչուող կոթողներ չկան»:

ԻՎԱՆՈՎ ԿԸ ՄԵՐՃԻ ԶԵԶԵՆԻՈՅ ՄԷՋ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՄՔՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով շարժաթաղանջի մերժմանը ընդունելով Չեչենիոյ մէջ Մոսկուայի կիրարկած քաղաքականութեան դէմ քննադատութիւնները՝ քննադատութիւնները՝ յայտնելով, որ անջատողական հանրապետութեան մէջ «միջազգային ահաբեկիչներու» դէմ պայքար կը մղէ:

Իվանով, որ Միւնխիտի մէջ ապահովութեան մարզին վերաբերող խորհրդաժողովի մը ընթացքին կը խօսէր, յայտնած է, թէ կարող մը «պարզամիտ մարդիկ» Չեչենիոյ մէջ կատարուածը կը ներկայացնեն իբրեւ «փոքրիկ, անկախ պետութեան մը դէմ ուսուցական յարձակողական մը»: Ան աւելցուցած է. «Չեչենիա Ռուսիոյ մէջ կ'մասն է. մեր իրաւունքն ու

ԻՍՐԱԵԼԻ 28 ՅՈՒՆՈՒԱՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՈԱԶ ԵՒ ԵՏԶ

ՇԱՐՈՆ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ, ՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑԱԾ Է ԱՊՈՒ ՄԱԶԷՆԻ ԵՒ ԱՀՄԷՏ ՔՈՐԷՅԻ ՀԵՏ



Իսրայէլացի զինուորներ արգելք կը հանդիսանան պաղեստինցի կիցերու՝ ուղղուելու դարմանատուն Հեպրոնի մէջ

Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը վերականգնելու ճամբուն վրայ դրական քայլ մը արձանագրուեցաւ շարժաթաղանջի մը, երբ հաստատուեցաւ, թէ իսրայէլացի եւ պաղեստինցի պաշտօնատարներու միջեւ բանակցութիւններ տեղի ունեցած են:

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի մէկ խորհրդակցանք՝ Տոյ վաղեստինցի եւ իսրայէլացի բարձրաստիճան

պաշտօնատարներ իսրայէլի Յունուար 28ի ընտրութիւններէն առաջ եւ ետք հանդիպումներ ունեցած են: Վաչագանեան աւելցուց, որ հանդիպումներուն նպատակը եղած է համոզել պաղեստինցիները, որ վերջ տան վայրագութեան եւ իսրայէլի դէմ յարձակումներուն: Վաչագան չըսաւ սակայն, թէ որո՞նք են հանդիպումներ ունեցող պաշտօնատարները:

Իսրայէլի պատկերասփռուի պետական կայա-

նը սակայն Շարաթ երեկոյեան հաղորդեց, որ Շարոն անձամբ հանդիպում ունեցած է Ապու Մազէնի (Մահմուտ Ապպաս) եւ Ահմէտ Բորէճի հետ: Ըստ կայանին, հանդիպումները տեղի ունեցած են ընտրութիւններէն առաջ եւ ետք:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատը, գործընդհանրապէս կ'ուզէ մեկուսացնել եւ անտեսել Շար.ը՝ էջ 2

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՔԱՌԵԱԿԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Ռուսիոյ Քիւրովոսցք քաղաքին մէջ Շարաթ, 8 Փետրուարին տեղի ունեցաւ կովկասեան քառեակի՝ Հայաստանի, Ռուսիոյ, Վրաստանի եւ Ազրպէյճանի խորհրդարաններու նախագահներու՝ Արմէն Ռաչատրեանի, Սերգէյ Միրոնովի, Նիկո Պոլոճանատեանի եւ Մուրթուզ Ալեքսեբովի զանգուածային հանդիպումը:

Հանդիպումին առաջ Միրոնով յայտնած է, թէ նաեւ հանդիպումներու ետմտեայ զրուցութեամբ կայացածն առնչութեամբ համաձայնութիւն գոյացած է:

Միրոնով յոյս յայտնած էր, թէ հանդիպումին մասնակիցները կ'արտայայտուին անկեղծօրէն, յատկապէս նաեւ հարցերու քննարկման ընթացքին, օրինակ՝ յո՞ճախ բարդացող ուսուցիչական յարաբերութիւնները կամ Լեռնային Ղարաբաղի տագնապը:

ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՄԷՋ՝ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՔՈՒ, 9 (ԱՅՓ).- Ապրիլ 3 քաղաքացիներ ձեռքարկուած են՝ Վրաստանի Փանքիսի հովիտին մէջ պիւնուրական գաղտնի մարկուսներու հետեւած ըլլալու կասկածներով, ըսած է Ապրիլմանի ապագային անվրասնագութեան նախարարութիւնը Կիրակի օր:

Անոնք Յունուար 29ին Վրաստանի մէջ հակահարեկչական ուժերու կողմէ ձեռքարկուած է Ապրիլմանի իշխանութիւններուն յանձնուած են, ըստ նախարարութեան մէկ հաղորդագրութեան:

«Ասիկա ցոյց կու տայ, թէ միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարելու մեր ճիգերը արդիւնատու են», աւելցուցած է անիկա:

Ռուսիա կ'ամբաստանէ չեչեն անջատողականներ՝ Փանքիսի իբրեւ ապաստան եւ մարկուսի վայր օգտագործելու յանցանքով:

Այսուհանդերձ, ամերիկացի պաշտօնատարներ կ'ըսեն, թէ իրենց գաղտնի տեղեկութիւններուն համաձայն, հովիտը օգտագործուած է նաեւ Ռուսիա Պրես Լատիսի ահաբեկչական «Քայիտա» ցանցին կողմէ՝ մարկուսներու համար, նախքան ցանցին անդամները առաքելութիւններու ուղարկելը:

«ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ՎԵՐԱՀԱՍՏԱՏԷ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԷՋ»

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ ԿԱՅԱՑԱԾ «ՓՐՕ ԱՐՄԵՆԻԱ» ԽՈՐՀՐԴԱՄՈՂՈՎԻՆ..... ԷՋ 4

ՄԻԱՅԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՍԲ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԳԵՐՄԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՊԵՏԸ ԿԸ ՄԵՐԺԵՆ ԻՐԱՔԻ ԳԷՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալ Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. կաթողիկոսն էր Գերմանական Եկեղեցիներու հոգեւոր պետ Մանֆրէտ Քօք եպիսկոպոս երէկ Կիրակի, 9 Փետրուարին, Անթիլիասի մայրավանքին մէջ միացեալ յայտարարութեամբ մը դատապարտեցին պատերազմի նախապատրաստական աշխատանքները՝ ուղղուած Իրաքին դէմ:

Երկու հոգեւոր պետերուն կողմէ ստորագրուած միացեալ յայտարարութիւնը կ'անդրադառնայ ներկայ աշխարհը տագնապեցնող քաղաքական անորոշութեան եւ ընդհանրապէս Միջին Արեւելքի անկայուն կացութեան, պաղտոտի նեխարայէլեան տագնապին ու Իրաքի դէմ պատերազմական նախապատրաստութիւններուն: Միացեալ յայտարարութեամբ անոնք կը մերժեն պատերազմի ընտանքը, եւ խաղաղ միջոցներով ու միջազգային օրէնքներով լուծում կը պահանջեն միջազգային տար-



Արամ Ա. իր խօսքին պահուն. կողքին՝ Քօք եպիսկոպոս

դուրսին ստացած քաղաքական տագնապին: Երկու հոգեւոր պետերը կարեւորութեամբ կը շեշտեն քրիստոնէական եկեղեցիներու համագործակցութիւնը, յատկապէս Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին ձամբով՝ փոխադարձ հարստացման համար:

Շաբաթ, 8 Փետրուարին մայրավանք ժամանած գերմանացի հոգեւոր առաջնորդը, երէկ, յընթացքս Ա. պատարագի քարոզեց Մայր տաճարին մէջ: Քօք եպիսկոպոս շեշտեց քրիստոնէական եկեղեցւոյ միութեան ու փոխադարձ գործակցութեան անհրաժեշտութիւնը: Ան բարձր գնահատանքով արտայայտուեցաւ Արամ Ա. կաթողիկոսին միջեկեղեցական կեանքին ներս տիրական ներկայութեան եւ անսակարկ ներդրումին, ու իր շնորհակալութիւնը յայտնեց իրեն ընծայուած այս բացառիկ պատիւին համար:

Նոյն օրը, երեկոյեան վեհափառ հայրապետը մայրավանքի սեղանատան մէջ պաշտօնական ընթրիք սարքեց ի պատիւ Քօք եպիսկոպոսին ու անոր ընկերացող բարձրաստիճան պատուիրակութեան: Հայրապետական հրաւերին ներկայ գտնուեցան Ազգային Կեդր. Վարչութեան անդամներ, Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, քոյր եկեղեցիներու հոգեւոր առաջնորդներ, միաբան հայրեր, միջեկեղեցական կեանքէն ներս ծառայութիւն բերող անձեր եւ յանձնախումբերու անդամներ ու հրաւիրեալներ:

Լիբանանի մէջ իր կեցութեան ընթացքին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան բարձրաստիճան հիւրը պաշտօնական հանդիպումներ պիտի ունենայ հանրապետութեան նախագահին եւ քրիստոնէայ ու իսլամ կրօնապետերու հետ:

Arabic header with religious text and logos: البيق, 14, and various Arabic calligraphy.

Տեղական մամուլին գլխաւոր նիւթը կը շարունակէ մնալ Իրաքեան հաւանական պատերազմը, որ կը սպառնայ ոչ միայն Իրաքի, այլ ամբողջ շրջանին ապահովութեան:

«Տիար» գրած է, թէ Միացեալ Նահանգներու նախագահ ձորՊուշ յայտարարած է, որ պատերազմը երկրորդ որոշումի մը չի սպասեր: Իսկ Ռամսֆելտը նշած է, թէ պատերազմը օրեր կամ շաբաթներ պիտի տեւէ եւ ոչ ամիսներ:

Ըստ թերթին, շրջանային իրավիճակը քննարկումներու նիւթ դարձաւ յօր. Լահուրի ունեցած խորհրդակցութիւններուն եւ հանդիպումներուն ընթացքին: Թերթը նշած է, թէ ժամայաք պահանջեց կրօնքը անջատել պետութենէն:

«Տիար» գրած է, թէ նախագահներ՝ Ասատ Եւ Շիրաք հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին քննարկեցին Իրաքի տագնապը եւ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին կեցուածքը:

«Լիուս» նշած է, թէ Պիքս Եւ Պարատի 8 Փետրուարին Պաղտատ այցելած են: Իսկ Մուպարաբ Ամման կը մեկնի Ասատի հետ Եւսալ Եւսթեն Եւսառաջ: Փարիզ, Մոսկուա եւ Պերլին կ'ընդդիմանան պատերազմին, իսկ Պուշ դէմ կը կենայ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին բխելիք երկրորդ որոշումի մը:

«Փէթըն» կը յայտարարէ, որ Իրաքի պատերազմը արգիլելու յոյսեր չառ քիչ են: Պիքսի եւ Պարատի Իրաք ժամանման նախօրեակին Պաղտատի ցուցաբերած մեղմացումին անհշուտեամբ Պուշ կը կասկածի: Ուշաքան Պուշի ըսած է, որ այս տագնապին կարելի է դուրս գալ առանց պատերազմի,

գրած է «Լիուս» օրաթերթը:

Թերթը նաեւ գրած է, թէ Փարիզ կը կարծազնէ իր կեցուածքը եւ ակնարկութիւն կը կատարէ վերջին իրաւունքի օգտագործման: Ըստ մամուլին, Փիոնկեանկ Ուաշինկթընի կը սպառնայ մոխիրի վերածել Բորէական թերակղզիին:

«Մուսքաքալ» թերթին համաձայն, ամերիկեան ուժերը կը շարունակեն տարածելի Օնցի մէջ եւ երկու այլ մարտանաւեր կը պատրաստուին շրջան ուղղուելու: Թերթը գրած է, թէ Ֆրանսա կը յայտարարէ, որ Իրաքեան տագնապը խաղ չէ եւ կարելի է Իրաքի ապահովումը առանց պատերազմի:

«Իւրայէլ» կը յայտարարէ. «Իրաքի դէմ ամերիկեան պատերազմը երկրաշարժ մըն է, որ պիտի վերադասաւորէ շրջանը», գրած է օրաթերթը:

«Պայրաք» օրաթերթը նշած է, թէ արաբ արտաքին գործոց նախարարներու ժողովին Լիբանանի ներկայացուցիչը վեկուցագիրը կը բարկանայ երեք հիմնական կէտերէ: Ըստ թերթին, Պիքս Եւ Պարատի Պաղտատ կ'այցելեն:

«Պայրաք» օրաթերթը նշած է, թէ արաբ արտաքին գործոց նախարարներու ժողովին Լիբանանի ներկայացուցիչը վեկուցագիրը կը բարկանայ երեք հիմնական կէտերէ: Ըստ թերթին, Պիքս Եւ Պարատի Պաղտատ կ'այցելեն:

«Պայրաք» օրաթերթը նշած է, թէ արաբ արտաքին գործոց նախարարներու ժողովին Լիբանանի ներկայացուցիչը վեկուցագիրը կը բարկանայ երեք հիմնական կէտերէ: Ըստ թերթին, Պիքս Եւ Պարատի Պաղտատ կ'այցելեն:

«Մնուար» նշած է, թէ ամերիկացի պիւտր մը սպաննուած է, իսկ 7 ուրիշներ վիրաւորուած են Քուէյթի մէջ:

«Մաֆիթ» հարցազրույցներ ունեցած է Ուալիտ Ժոնայի հետ: Միջեկ Սուէն է: Վերջինը ըսած է, թէ պատերազմը պիտի վերականգնէ երկրի

իսկ Պուշ կարգած կը մնայ յարձակումի սկսելու մասին տրուելիք որոշումի մը: Թերթը գրած է, թէ ամերիկեան ժամանակացոյցին համաձայն, պատերազմը պիտի տեւէ կամ 6 օր եւ կամ 6 շաբաթ: Պաղտատ կը կայմակերպէ նոր այցելութիւններ իր պիւտրական կեդրոնները եւ Միացեալ Նահանգները կը պզուցացնէ երկրորդ Սթայիկըստէ մը:

«Լիուս» օրաթերթը Պիքսի ներկայացուցած տեղեկագիրին մասին գրած է, թէ անիկա ամերիկացի ուսանողի մը դոկտորական թէկն է:

«Պայրաք» գրած է, թէ նախագահ Լահուրի աշխարհին կը պահանջէ կասեցնել պաղտոտի նեխարայէլեան յետադիմութիւնը դէմ իրարայեկեան վայրագութիւնները:

«Լիուս»-ի համաձայն, Ուաշինկթըն կը քննադատէ քնակարաններ քանդելու քայլը, իսկ Շարոն գաղտնի հանդիպումներ կ'ունենայ Ապու Մապիտի եւ Անէտ Քորէյի հետ:

Այլ լուրերու կարգին «Լիուս» գրած է, թէ Ֆահտ թագաւոր եւ Ապտալա իշխան ժեռտայի մէջ կը հետապնդեն հաժի առնչութեամբ եղած դատաւորումները: Ըստ թերթին, մէկ միլիոնէ անէլի ուխտաւորներ կատարեցին հաժի իրենց աղօթքը:

«Մնուար» նշած է, թէ ամերիկացի պիւտր մը սպաննուած է, իսկ 7 ուրիշներ վիրաւորուած են Քուէյթի մէջ:

«Մաֆիթ» հարցազրույցներ ունեցած է Ուալիտ Ժոնայի հետ: Միջեկ Սուէն է: Վերջինը ըսած է, թէ պատերազմը պիտի վերականգնէ երկրի

Advertisement for «ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ» featuring a logo and text about services.

Advertisement for «ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ» with a logo and text about legal services.

Advertisement for «ՀԱՏՐԱԿԻ ՄՐՅԱՆՇԱՐՔ» with a checkered logo and text about electrical services.

Advertisement for «ARMENIA: THE BETRAYED» with a logo and text about a BBC2 program.

Advertisement for «ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ» with a logo and text about a book launch.

Advertisement for «ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ» with a logo and text about a book launch.




Advertisement for «FRIGO SERVICES» with a logo and text about refrigeration services.

Advertisement for «NOAH'S ARK ART GALLERY» with a logo, text, and an image of a painting.

Advertisement for «IGOL» fuel card with an image of a fuel nozzle.

Advertisement for «FUEL CARD» with large text and a phone number.

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Շ. Մ. Ը. Մ. ԵՐԵՔ ԿԵՏՈՎ ՎԵՐԱԴԱՐՁԱԲ ՊԵՅՐՈՒԹ

Լիբանանի ֆուտպոլի ախոյանություն 14րդ երկրորդ առաջին հանգրուանի մրցումներուն, երկ **Շ. Մ. Ը. Մ.** ֆուտպոլի ներկայացուցչական խումբը երեք կետով վերադարձաւ Պէյրուօ՝ Նիարայի (Պէքա) «ժամալ Ապտէլ Նասէր» դաշտին վրայ 1-0 արդիւնքով պարտութեան մատնելով ընդհանուր դասաւորման վերջին դիրքը գրաւող խումբը՝ Հըրրիէ Մաժալ Այն-ճարը, որ այսպիսով այս եղանակին երկրորդ անգամ ըլլալով պարտութիւն մը կրեց **Շ. Մ. Ը. Մ.** քիւն երթի առաջին հանգրուանի մրցումներուն, անիկա 3-1 արդիւնքով պարտութիւն մը կրած էր Պուրճ Համուտի մէջ:

Ա. կիսախաղին, **Շ. Մ. Ը. Մ.** թէեւ փորձեց կոյ մը նշանակել, սակայն չյաջողեցաւ եւ սպասեց մինչեւ մրցումին աւարտէ քիչ մը առաջ, երբ վարդան Ղապարեանի մէկ փոխանցումին վրայ Դրո Քէիեան ցնցեց Հըրրիէի բերդին ուղկանը՝ իր խումբին ապահովելով այս եղանակի 10րդ յաղթանակը:

Օրուան իրաւարարը սակայն չկրցաւ սուլել մրցումին աւարտը, որովհետեւ մրցակից կապ մին մարպիկներն ու պատասխանատուները անոր վրայ յարձակեցան, յայտնապէս դժգոհ մնալով անոր մէկ որոշումէն՝ կարմիր քարտ մը իրենց մէկ մարպիկին, կոյէն ետք: Զինուորներ միջամտեցին եւ իրաւարարները դուրս բերուեցան դաշտէն եւ **Շ. Մ. Ը. Մ.** երեք կետով վերադարձաւ Պէյրուօ:

Վստահաբար ֆուտպոլի ֆետերասիոնը իր ժողովին պիտի քննարկէ այս հարցը եւ լսելէ ետք իրաւարարին ու ֆետերասիոնին պատասխանատուին ղեկուցումը սահմանէ պատիժներ՝ մրցակից կապ մին նկատմամբ:

Պէտք է ըսել, որ երկուսն այս ճակատումին մրցակից խումբը գրեթէ յիշատակելի ոչ մէկ առիթ կրցաւ տեսնել, բացի աննշան քանի մը վտրճէ ետք, մինչ **Շ. Մ. Ը. Մ.** աւելի լաւ կապ մ կերպովս յարձակումներ կատարեց, շատ յաճախ դիտումնաւոր ֆաուլերու պէտքերով մրցակից կապ մին մարպիկներուն կողմէ:

Դարձի 2րդ հանգրուանի մրցումներուն, **Շ. Մ. Ը. Մ.** մրցակիցը պիտի ըլլայ Աիլի Սայտա:

Մրցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Կիրակի, 16 Փետրուարին, Պուրճ Համուտի Բաղաբապետարանի դաշտին վրայ, ժամը 2:30ին: Իր կարգին, **Շ. Մ. Մ.** երեք կետով վերադարձաւ Պէյրուօ, Սուրի Բաղաբապետարանի դաշտին վրայ 2-1 արդիւնքով պարտութեան մատնելով նախապէս դիրքը գրաւող Աիլի Սայտան:

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն արդիւնքները:

Բ. ՂԱՍԱԿԱՐԳ (14ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ)

Իժմաբի - Ծապապ Թրիփոլի	2-1
Նահտա Պար Էլիաս - Ռասիկ	1-0
Հըրրիէ Մաժալ Այնճար - Շ. Մ. Ը. Մ.	0-1
Աիլի Սայտա - Շ. Մ. Մ.	1-2
Իսլահ Պըրժ Ծիմալի - Մահապպա Թրիփոլի	0-0
Թատամոն Նապաթիէ - Ռիատա Ուալ Ատապ	3-2

Ա. ՂԱՍԱԿԱՐԳ (12ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ)

Աիլի Այնճար - Աիլի	0-4
Անսար - Մաֆ	1-1
Մաժալ - Պըրժ	3-2
Մապարրա - Օլիմփի	0-2
Նըրժիէ - Սալամ	1-0
Ծապապ Սահիլ - Թատամոն Սուր	1-1

Ստորեւ՝ դասաւորումը:

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Շ. Մ. Ը. Մ.	10	2	0	33	7	32
2.- Շ. Մ. Մ.	8	2	2	31	19	26
3.- Իսլահ	4	6	2	19	13	18
4.- Իժմաբի	5	3	4	14	17	18
5.- Ռասիկ	5	1	6	16	16	16
6.- Ռիատա	3	6	3	16	15	15
7.- Ծապապ	4	3	5	12	15	15
8.- Նապաթիէ	4	3	5	16	20	15
9.- Նահտա	5	0	7	14	20	15
10.- Մահապպա	3	3	6	13	20	12
11.- Սայտա	3	1	8	12	22	10
12.- Հըրրիէ	2	2	8	13	23	8

●ՍՏՈՐԵՒՆ Ա. դասակարգի դասաւորումը:

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Ահտ	9	2	1	21	9	29
2.- Նըրժիէ	7	3	2	21	11	24
3.- Օլիմփի	7	2	3	20	7	23
4.- Թ. Սուր	5	7	0	21	13	22
5.- Անսար	6	4	2	23	14	20
6.- Մաժալ	5	3	4	16	14	18
7.- Պըրժ	4	2	6	11	18	14
8.- Մաֆ	3	4	5	13	17	13
9.- Մապարրա	2	4	6	13	24	10
10.- Սահիլ	1	6	5	13	20	9
11.- Սալամ	1	3	8	12	23	6
12.- Ա. Ալիլ	1	3	8	6	20	6

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅ ՎԵՐՍՏԻՆ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԻՆ ՎՐԱՅ

Ֆրանսայի ֆուտպոլի ախոյանություն 27րդ հանգրուանի մրցումներուն Մարսէյ 2-0 արդիւնքով յաղթական վերադառնալէ ետք Աժաք-սոնի դաշտէն վերստին գրաւեց պարաօլիպիկ զիբրը, նկատի ունենալով, որ Մոնաքո 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց երկու կէտով կը դերազանցէ իշխանապետական կազմը: Մարսէյի երկու անպատասխան կոյեքը նշանակեցին Իպրահիմ Պաքարթո (34րդ) եւ Լամին Սաիո (79րդ) փենալթիով:

Մարսէյի ֆուտպոլի կազմը՝ Փարիզ Սէն Ժերմէն իր դաշտին «Փարք տը Փրէնս»-ի մէջ կրեց պարտութիւն մը, այդ ալ նախապէս զիբրը գրաւող Մոնփելիէին, 3-1 արդիւնքով: Հակառակ անոր որ դաշտին տէրերը մրցումին առաջին վայրկեանին բացին հաշիւը, շնորհիւ ժըրոմ Լըրուայի, սակայն հիւր կազմը յաջողեցաւ նշանակել երեք կոյ, շնորհիւ՝ Վալերի Մեգալէի (14րդ եւ 20րդ) եւ Ֆոտէ Մանսարէի (75րդ): Իր կրած այս պարտութեանէն ետք Փարիզ Սէն Ժերմէն նահանջեց 8րդ դիրքը, ինը կէտով ետ մնալով Մարսէյէն:

Մրցումէն ետք, Սէն Ժերմէնի մարզիչ Լուիս Ֆեռնանտէզ շնորհաւորեց մրցակից կազմը իր արձանագրած այս յաղթանակին համար, ըսելով, որ անոնք յաջողեցան լաւ մրցում մը կատարել եւ արժանանալ յաղթանակին: Իր կազմին կատարած խաղարկութեան անդրադառնալով, ան ըսաւ, թէ իր մարզիկները այդքան ալ լաւ ներկայացում մը չունենան, սակայն կոյ նշանակելու լաւ առիթներ ստեղծեցին, ինչ որ ըստարար չէր երեք կէտ հաւաքելու, որովհետեւ վերջաւորութեան կոյ նշանակող խումբն է, որ կը տանի վերջնական յաղթանակը:

Նիս իր դաշտին «Սթատ



Լուիս Ֆեռնանտէզ

Լասուանտ (54րդ) նշանակեցին քորսիքական կազմին կողմէ: Միքայէլ Էսիէն (21րդ) եւ Լիլիան մին կողմէ:

ԱՐԺԱՆԹԻՆ ՀԱՍԱԻ «ՏԷՅՎԻՍ» ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ ՔԱՌՈՐԴ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ



Դաւիթ Նալպանտեան (ձախից) իր խմբակիցի՝ Լուրաս Անուլտի հետ կը սուճէ իր յաղթանակը

Ֆրանսա, Սպանիա, Աւստրալիա եւ Արժանթին անցեալ շաբաթավերջին հասան քենիսի «Տէյվիս» բաժակի աշխարհի ախոյանությունն ըստ որի աւարտականին, երբ իրենց կատարած բացման մրցումին յաղթանակներ արձանագրեցին:

Արժանթինահայ Դաւիթ Նալպանտեան, գերմանացի Լարս Պուրկամիլըրի դէմ իր կատարած մրցումին 6-1, 7-6 եւ 7-5 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, մինչ պոլի մրցումներուն, ան իր խմբակիցին՝ Լուրաս Անուլտի հետ յաջողեցաւ 6-1, 0-6, 4-6, 6-1 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնել Ռայնըր Շուլթըր-Սիքայէլ Բոնիման պոլի:

Փարիզի մէջ (Ֆրանսա) տեղի ունեցող քենիսի աղբը-կանց մրցաշարը երկ վերջ գտաւ ամերիկացի Սերէնա Ուիլյամսի յաղթանակով, որ 6-3 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց իր մրցակիցը՝ 3րդ դասումս ֆրանսացի Էմիլի Մորէսովոն: Թի 1 դասումս Սերենա (21 տարեկան) այսպիսով յաջողեցաւ շախի իր ասպարէկին ընթացքին իր 21րդ տիտղոսը, պարտութեան մատնելէ ետք 23 տարեկան իր մրցակիցը:

2003Ի ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԿՍԻ ՍԱՐՏ 9ԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻՆ 2002Ի ԾԱԽՍԵՐԸ՝ 815 ՀԱԶԱՐ ՏՈԼԱՐ

Հայաստանի ֆուտպոլի ֆետերասիոնին նախագահ՝ Ռուբէն Հայրապետեան, անցեալ շաբաթ իր կատարած մամուլային հարցազրուիչի ընթացքին յայտարարեց, թէ 2002 թուականի ընթացքին ֆետերասիոնին եկամուտը գնահատուեցաւ 974 հազար ամերիկեան տոլարով, իսկ անոր ընդհանուր ծախսը եղաւ՝ 815 հազար ամերիկեան տոլար:


Հայաստանի ֆետերասիոնը անցեալ տարի Եւրո-Խ. Է. Ֆ. Ա. Է. նախագահեց 590 հազար ամերիկեան տոլար, ՖիՖԱ-էն 77 հազար տոլար, Եւրո-Խ. Է. Ֆ. Ա. Է. նախագահեց 20 հազար տոլար, Հովանաւորող ընկերութիւններէն՝ 50 հազար տոլար: Ա. դասակարգի ախոյանություններուն մասնակցող խումբերէն անիկա ստացաւ 48 հազար տոլար եւ

տի ունենայ մասնակցութեամբ 10 խումբերու՝ փոխան 12ի, նկատի ունենալով, որ երկու խումբեր՝ «Չուրթիոն» Երեւան եւ Արմաւիր նիւթական ղեկավարութեան ունենալով չեն կրնար ախոյանութեան մրցումներուն իրենց մասնակցութիւնը բերել:

Ռուբէն Հայրապետեան խումբերու նուազումին մասին անդրադառնալով ընդհանուրի ախոյանությունները պիտի ընթանայ երկու հանգրուանով: Առաջին հանգրուանին պիտի յատկանան վեց լաւագոյն խումբերը, իսկ երկրորդ հանգրուանին՝ ախոյանութեան մրցանակակիրները:

ԷՆ. ՊԻ. ԷՅ. «ՈՒՍԹԱՐ»Ի ՄՐՅՈՒՄ

ՌԻԶՈՐՏԱՆԻ ԼԱՍԻԱԳՈՅՆ ՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂԸ



Ճէյսըն Ռիչըրտսըն

Անցեալ շաբաթավերջին, Էն. Պի. Էյ. մրցումները ղաղարի մէջ էին, որովհետեւ տեղի ունեցան Օլ-Սթարի մրցումները:

Կոլտըն Սթէյթ Ուոլբոլի մարզիկներէն՝ Ճէյսըն Ռիչըրտսըն պահեց իր տիտղոսը, երբ տանի մրցումներուն, յաջողեցաւ արձանագրել լաւագոյն արդիւնքը եւ ապահովել 96 կէտ, այսպիսով Մայքըլ Ճորտընէն ետք դառնալով երկրորդ մարզիկը, որ իր մօտ կը պահէ այս տիտղոսը: Նշենք, թէ Ճորտըն դատական յանձնախումբի անդամ էր: 2րդ դիրքը գրաւեց Սիթթըլ Սուփըրսոնիքսի մարզիկ Տէյսըն, որ ապահովեց 93 կէտ:

Երեք կէտնոց կողով նշանակելու տիտղոսին տիրացաւ Սաքրամենթո Քինկի մարզիկ Փեյա Սթոյաքովիչ, որ նշանակեց 22 երեք կէտնոց կողովներ: 2րդ դիրքը գրաւեց Մեմֆիս Կրիզլիքի մարզիկ Ուեսլի Փերսըն, որ նշանակեց 16 երեք կէտնոց կողովներ:

AREV

BOULIQUÉ

JAL EL DIB-CENTER OSCAR
TEL.: (04) 715170 FAX: (04) 713397
BOURJ HAMOUD-CENTER ARINE
TEL.: (01) 254953-4
AREV@hotmail.com

**INCROYABLE !
SOLDES FOUS**

SUR TOUTE LA NOUVELLE
COLLECTION POUR HOMMES

VENEZ VOIR PAR VOUS MEMES

COSTUMES ALLEMANDS GREIFF ET ITALIENS à partir de \$250

PANTALONS GREIFF à partir de \$85

VESTES SPORT GREIFF à partir de \$175

TAILLES NORMALES ET COURTES (SHORT CUT)
ET GRANDES TAILLES (58 à 66)

bolmard

Zalka - 01 895376

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵՐԸ...

Շարունակում 3րդ էջԸԸ

ժողովրդավարությունը եւ թէ ինք Լիբանան պիտի վերադառնայ, եթէ մաքիան հեռանայ հոնկէ: Ուստի ժոնալայ «Սաֆիր» թղթակիցին ըսած է, թէ պատերազմը անարդարութիւններու դուռ պիտի բանայ եւ Լիբանան պիտի իյնայ ամերիկեան եւ իսրայէլեան շրջափակումի մէջ:

«Նահար» օրաթերթը երիտասարդական հարցերու նուիրում իր էջերուն մէջ լուսարձակի տակ առած է Հ. Յ. Դ. ԼԵՄԻ եւ ՉՈՍԻ աշխատանքները:

Թերթը գրած է. «Չաւարեան Ուսանողական Միութիւնն ու Լիբանանի Երիտասարդական Միութիւնը կը գործեն լուրեան մէջ եւ կը մասնակցին կուսակցութեան որոշումներուն հաստատման: Հ. Յ. Դաշակցութեան հովանիին տակ գործող ՉՈՍԻ եւ ԼԵՄԻ կը կազմեն Լիբանանի հայկական երիտասարդական մեծագոյն ցանցը: Այս երկու միութիւնները մեծ աշխուժութեամբ, թափով եւ գործունակութեամբ կ'աշխատին հայ եւ լիբանանցի երիտասարդութեան հետ:

«Անոնց գործունէութիւնը ունի մշակութային, դաստիարակչական եւ կրթական բնոյթ ու անոնք հեռու են քաղաքական նեղ պայքարներէն, որոնք ընդհանրապէս տարածուած են լիբանանեան ուսանողական այլ շարժումներու մէջ»:

Միութիւններուն պատմական, անոնց գործունէութիւնն ու հարապակցութիւնը ներկայացնելէ ետք, յօդուածին աւարտին յօդուածագիրը նշած է, թէ ՉՈՍԻ եւ ԼԵՄԻ կը մնան օրինակելի իրենց տարած լուր, սակայն յստակ նպատակակետեր ունեցող աշխատանքով, հեռու ներքին պայքարներէ եւ արտաքին կողմերու հետ բախումներէ:

«ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐ

ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է...»

Շարունակում՝ 4րդ էջԸԸ

անոնք իրենց ռազմավարական շահերուն համար կը գոհնեն մարդկային ամէն տեսակ իրաւունք, եւ հայ ժողովուրդը մեծագոյն զոհերէն է ներկայ աշխարհին մէջ: Այս ծիրէն ներս վեհափառը բարձր գնահատանքով յիշեց Ֆրանսայի կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը: Վեհափառը խօսելով ընդունութեան մասին՝ ըսաւ, թէ երկխօսութիւնը փոխադարձ յարգանքի ու վստահութեան վրայ հիմնուած զէպի արդարութիւնն ու խաղաղ գոյակցութիւնն տանող ամէնէն ապահով ճանապարհն է. եւ այս շրջագիծէն ներս «Հայաստանն ու հայ ժողովուրդը կրնան կամուրջի գեր կատարել», ըսաւ վեհափառը:

Իր խօսքի վերջին բաժինին մէջ Արամ Ա. կաթողիկոս անդրադարձաւ Եւրոպայի պարզած ներկայ կացութեան եւ ըսաւ, թէ Եւրոպան սոսկ աշխարհաքաղաքական միտքը մը չէ, այլ՝ մշակութային ու քաղաքակրթական իրականութիւն մը: Հոս կը կայանայ Եւրոպայի իւրաքանչիւր ինքնութիւնն ու դերը: Վեհափառը նաեւ կարեւորութեամբ շեշտեց Եւրոպայի կեցողածքը միաբանութեամբ ու նուաճողական ամէն տեսակ քաղաքական մտտեցումներուն դէմ: Ան ըսաւ, թէ Հայաստան մաս կը կատարէ Եւրոպային եւ իր ազգային իւրաքանչիւր ինքնութիւններով ու աշխարհաքաղաքական դիրքով կոչուած է կարեւոր նպատակներէ յետոյ Եւրոպայի վերակառուցման գործին: Իր խօսքի աւարտին վեհափառը վերահաստատեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան յանձնարարութիւնը, շարունակելու իր աջակցութիւնը բերելու նպատակով Հայաստանի հզօրացման գործընթացին:

Ֆրանսերէնով արտասանուած վեհափառին խօսքը բարձր գնահատանքով ընդունուեցաւ ներկաներուն կողմէ: (Հայրապետական խօսքը ամբողջութեամբ կարելի է կարդալ Ֆրանսերէն բնագիրով կաթողիկոսարանի կայքէջին վրայ՝ www.cathcil.org): Արամ Ա. վեհափառն ետք Հայաստանի կողմէ յաջողաբար խօսք առին Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արմէն Նաչատրեան եւ արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան:

ՀԻՒՍ. ՔՈՐԷԱՅԻ ՏԱԳՆԱՊԸ ՇԱՏ ԱՒԵԼԻ ՎՏԱՆԳԱՒՈՐ Է ԻՐԱՔԻ ՀԱՐՑԵՆ

ԿԸ ԶՈՒՇԱՅԵ ԻՎԱՆՈՎ

Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով երէկ զգուշացուցած է, թէ Հիւսիսային Քորէայի կապուած կորիզային տագնապին ներկայացուցած վտանգը շատ աւելի մեծ է քան Իրաքի վտանգը: «Գործնական գիտնականութեան» կողմից յիշուած է:

Միւնիխի մէջ կայացած մամուլի ասուլիսի մը ընթացքին, Իվանով ըսած է, որ Հիւսիսային Քորէայի տագնապը քննարկելու է իր ֆրանսացի, գերմանացի եւ ամերիկացի պաշտօնակիցներուն, ինչպէս նաեւ ՕԹԱՆԻ ընդհանուր քարտուղար Ճորճ Ռոպերթսընի հետ: Ապահովութեան մարզին վերաբերեալ խորհրդակցութիւնները արտաբերելու է նաեւ, որ միաժամանակ պէտք չէ մոռնալ, թէ Հիւսիսային Քորէայ գերիշխան պետութիւնն մըն է եւ «կը մերժենք որեւէ ճնշում, մասնաւոր զինուորական ճնշում, գերիշխան պետութեան մը վրայ»:

Միւս կողմէ, Իրան երէկ Մ. Նահանգները այսպանած է Հիւս. Քորէայի կողմէ կորիզային իր ծրարութեան հետք կարելի է գտնել նաեւ Չեչենիոյ մէջ:

Գիրիս վերաշխուժման համար՝ յոյս յայտնելով, որ կացութիւնը խաղաղ միջոցներով պիտի լուծուի:

Արտաքին գործոց նախարարութեան բանբեր Համիտ Ռիզա Ասեֆի թեւեւ ինքնաբերական ձեւով շեշտեց, որ Հիւս. Քորէան զսպելու միջոցով չի կարող հաղթահարուիլ:

Ասեֆի վերստին յիշեցուցած է, թէ իսլամական Հանրապետութիւնը ստորագրած է կորիզային զէնքերու տարածումը արգելող համաձայնագիրը, որմէ քաշուած է Հիւս. Քորէան, Յունուար 10ին, համաշխարհային քննադատութեանց դուռ բանալով:

Մինչ այդ Հիւս. Քորէան երէկ Մ. Նահանգները ամբաստանած է ներխուժում մը ծրարելու յանդէպը՝ զգուշացնելով, որ տագնապը արագօրէն կրնայ կորիզային պատերազմի մը վերածուի:

Անիկա նաեւ յայտնած է, որ «ամէնէն խիստ» միջոցառումները պիտի օգտագործէ իր շահերը պաշտպանելու համար:

Զգուշացումները կը յաջորդէին Մ. Նահանգներու անցեալ շաբթուան այն յայտարարութեան, թէ 2 տասնեակ ռմբակոծիչ օդանաւ պիտի զրկէ Նահանգներու շրջանը, իրեն Հիւս. Քորէան զսպելու միջոց:

Հիւս. Քորէա հետեւողականօրէն մերժած է միջազգային որեւէ միջամտութիւն՝ տագնապին լուծման համար՝ շեշտելով, որ Մ. Նահանգներու հետ ուղղակի բանակցութիւններ կը պահանջէ:

Սակայն կորիզային Ռեզոլուցիոն Միջազգային Գործակալութեան պատասխանատուները այս Զորքաբաժնի օր ժողով մը վրայ գումարեն՝ Հիւս. Քորէայի կորիզային կեդրոններու հարցին քննարկումին համար:

Ուաշինկթըն կը շեշտէ, թէ Հիւս. Քորէայի գծով զիւսնադիտական մտտեցում մը կ'ուզէ՝ պահանջելով, որ Փրոնկեանկի վրայ միջազգային ճնշումներ ի գործ դրուին Զինատանի, Ռուսիոյ, Ճափոնի եւ Հար. Քորէայի նման երկիրներու կողմէ:

(ԱՖՓ)

ԻՎԱՆՈՎ ԿԸ ՄԵՐԺԷ ԶԵՉԵՆԻՈՅ ՄԷՁ...

Շարունակում Ա. էջԸԸ

Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով մերժեց, որ Ռուսիոյ եւ Եւրոպայի միջեւ տագնապը խաղաղ միջոցներով լուծուի:

ՀԱՆՐԱՊԵՏԻՆ ԱՆՆՈՒԹԵԱՍԲ

Ինչ կը վերաբերի Մարտին Չեչենիոյ մէջ նախատեսուած հանրաքուէին, որ Ռուսիոյ եւ Եւրոպայի միջեւ տագնապի մեծ աղբիւր մըն է, Իվանով յայտնած է, թէ անիկա Չեչենիոյ ժողովուրդին համար աղբիւր մըն է «իր սեփական անկատարի վճռելու»:

Ռուսիա եւ ԵԱՀԿ բախում ունեցած են հանրաքուէին պատճառով, կոր Մոսկուա քաղաքական արդար լուծում մը կը նկատէ Չեչենիոյ տագնապին, մինչ ԵԱՀԿ պայմանադրար կը գտնէ:

ԵԱՀԿի դէտեր կը յայտնեն, թէ Չեչենիոյ մէջ

պայմանները անկարելի կը դարձնեն արդար ընտրութիւններ կայացումը, մասնաւոր ռուսական մեծ թիւով ուժերու ներկայութեան:

Կը նախատեսուի, որ հանրաքուէին իբրեւ արդիւնք հաւանութիւն տրուի Չեչենիոյ համար նոր սահմանադրութեան մը, որ պայման պիտի հաստատէ իբրեւ Ռուսիոյ «անբաժան» մէկ մասը եւ 2004ի սկիզբներուն նախագահական ընտրութեանց ճակատ հարթէ:

Իվանով դարձեալ հաստատած է Մոսկուայի մերժողական կեցողածքը, ինչ կը վերաբերի Չեչենիոյ անջատողական նախագահ Աւայի Մասխալովի հետ բանակցելու կարելիութեան՝ պայմանաւորաբար նկատելով: «Նման մարդիկ պէտք է դատուին կամ բնաջնջուին», յայտնած է ան:

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ ՅԱԶՈՂՅԱՆ...

Շարունակում Ա. էջԸԸ

ՄԱԿի բոլոր որոշումներուն: Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնրոյ Ռամսֆելտը Միւնիխի պաշտպանութեան խորհրդածոյովին փորձեց միացեալ կեցուածք մը ապահովել Ֆրանսային եւ Գերմանիային, որոնցմէ երկրորդը յատկապէս անորդուելի մնաց, մերժելով պիտուրական որեւէ առաջարկ: Երեք երկիրները Միւնիխի խորհրդածոյովը օգտագործեցին հրապարակելու համար Իրաքի հանդէպ իրենց տեսակետները: Ռամսֆելտը յայտարարեց, որ զիւսնադիտութիւնը ձախողած է ապապիստելու Իրաքը եւ թէ ամբողջ աշխարհը պէտք է պատրաստ ըլլայ ուժի գործածութեան:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Միշել Ալիօ Մարի ըսաւ, որ Փարիզ ամբողջութեամբ չի մերժեր պիտուրական ընտրանքը, բայց Եւրոպայի պայման կը նկատէ վերջին միջոցը: Ֆրանսացի նախարար քննադատեց Միացեալ Նահանգները, որոնք կը փորձեն անտեսել ու մեկուսացնել եւրոպական այն երկիրները, որոնք կը մերժեն պիտուրական ընտրանքը:

Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եոշքա Ֆիշլը իր կարգին ըսաւ, որ Միացեալ Նահանգներ պէտք է համոզուի դատ մը ներկայացնել: Ֆիշլը խորհրդածոյովին դիմաց յայտարարեց, թէ ինք անամբ չէ համոզուած:

Գերմանիա մէկ պիջում կատարեց, յայտարարելով, որ «Փէթրիլթ» հրթիռներ պիտի տրամադրէ ՕԹԱՆԻ դաշնակից թուրքիոյ: Անգարա շարքով երջին համաձայնագիր մը ստորագրած էր Միացեալ Նահանգներու հետ, արդիականացնելու օրու մը պիտուրական այլ խախտիներ, չորս պիտի գործածեն ամերիկեան ուժերը՝ Իրաքի դէմ պատերազմի մը պարագային: Թրքական աղբիւրներուն համաձայն, մօտ օրէն աւելի քան 3500 ամերիկացի մասնագետներ Թուրքիա պիտի ժամանեն՝ արդիականացման աշխատանքը կատարելու համար:

ՊԼԻՔՍ ԵՒ ՊԱՐԱՏԻ ԻՐԱՔԻ ՄԷՁ

ԱՆՍՈՎԻՔԻ զիխար քննիչ Հանս Պիլքս եւ Հիւլիական Ռեմանի Միջազգային Գործակալութեան տնօրէն Մոհամէտ Պարատի Շաքաթ օր Պաղտատ ժամանեցին, վերջին հանդիպում մը ունենալու համար իրաքցի պաշտօնատարներու հետ՝ Փետրուար 14ի տեղեկագիրի ներկայացումէն առաջ:

Իրաք երէկ հաւաքական քանդումի պէնքերու ծրագիրներու մասին նոր փաստաթուղթեր Միւնիխեց Պիլքսի եւ Պարատի, յայտնեցին ՄԱԿի աղբիւրներ: Անոնք անեղծուցին, որ փաստաթուղթերը կ'առնչուին քիմիական, կենսաբանական եւ կորիզային պէնքերու: Պարատի ըսաւ, որ տեսակցութիւններն ու քննարկումները կը շարունակուին: Պիլքս իր կարգին յայտնեց, որ տեսակցութիւնները շինիչ էին: Իրաքի կողմէ հանդիպումներու մասնակցած են նախագահական խորհրդատու Ամէր Սաստի եւ Կօր. Հոսամ Մոհամէտ Ամին:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան Շաքաթ օր յայտնած էր, թէ միջազգային կապմակերպութիւնը շուտով պէտք է որոշում մը տայ Իրաքի հանդէպ: Անան շեշտեց սակայն, որ պատերազմի որոշումը ՄԱԿի կը պատկանի եւ ոչ թէ Միացեալ Նահանգներուն: Ան աւելցուց, որ պատերազմը պէտք է ըլլայ վերջին ընտրանքը:

Մինչ այդ, Փենթակոն թափ կու տայ պիտուրական պատրաստութիւններուն, Օոցի մէջ գտնուող 110,000 ամերիկացի պիտուրներուն թիւը յարաբերակալ շաբթուան մէջ պիտի բարձրանայ 150,000ի: Անոնց 51 հազարը կեդրոնացած է Քուէյթի մէջ, ծանր պէնքերով ու հրետանով: Փենթակոնը քանի մը օրէն շրջան պիտի ուղարկէ հինգ օդանաւակիրներ, որոնց կ'ընկերակցին «Քրուկ» հրթիռներ արձակող մարտանաւեր: Իրաքաբանչիւր օդանաւակիր կը փոխադրէ 80 օդանաւ:

Միւս կողմէ, բրիտանական աղբիւրներ հաղորդեցին, թէ Լոնտոն եւ Ռաշինկթըն կը մշակեն ծրագիր մը, որ 48 ժամուան վերջնագիր պիտի տայ Աստուած Հիւսէյնի՝ Պաղտատէն հեռանալու համար, այլապէս՝ պատերազմը պիտի յայտարարուի:

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ ԶԵՆ ԿՐՆԱՐ ԱՐԳԻԼԵԼ ՊԱՏԵՐԱԶՍԸ

Եթէ Միացեալ Նահանգներ եւ Ապահովութեան խորհուրդը որոշեն պատերազմ յայտարարել Իրաքի դէմ, արաբական պետութիւններ կարողութիւնը պիտի չունենան արգելելու, յայտարարեց Եգիպտոսի նախագահ Հիւսէյն Մուպարաբ երէկ: Մուպարաբ, որ կը խօսէր Սուրիոյ եւ Լիպիոյ ղեկավարներուն՝ Պաշար Ասատի եւ Մուամմար Քադաֆիի հետ տեսակցութեան առաջ, ըսաւ, որ արաբները ծաղրի առարկայ պիտի դառնան, եթէ իսկապէս հաւատան, թէ կրնան պատերազմը յետաձգել, կամ արգիլել:

Շարմ էլ Շէյխի հանդիպումին ներկայ եղան նաեւ Սեուտական Արաբիոյ արտաքին գործոց նախարար Անուա Ֆայսալ եւ Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա:

ՅՅՈՎՀԱՆՆԵՍ Պոզոն Բ. պարզ, որ այս շաբթուան ընթացքին տեսակցութիւն մը պիտի ունենայ Իրաքի փոխ վարչապետ Թարէք Ալիյի հետ, ըսաւ, որ տակաւին կարելի է պատերազմին խուսափել, եթէ ճիշդը բազմապատկուի:

ՅԻՐԱՆ յայտարարեց, որ շրջանը չի կրնար նոր պատերազմ մը տանիլ: Թեհրան կոչ ուղղեց Պաղտատի ենթարկուելու ՄԱԿի որոշումներուն:

(ԱՖՓ)

ԿԱՃԱՌԱՏԱՆՍ ՀԻՄՆԱԳՈՒԹԵԱՆ
42 ԱՄԵՎԿ (1961 – 2003)
Երկար տարիներու փորձառութեամբ
ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ ՍԱՐԳԻՍ
Կը պատրաստէ ամէն տեսակ համեղ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՆՈՒՇԵՐԵՆԵՐ
ԱՄԵՆ ԱՆՈՒՍ ԵՆՅԷ ԺՊԵՆ
ՆԱԽԱՃԱՆՆԵՐ՝ ԵՐՈՒԱՍԱՆ ԵՒ ԵՒԵՐ ԿԱՐԿԱՆԴԱԿ
ԵՆՅԷՐԻ ԽՈՐՈՒ ԵՒ ԱԹԱՅԷՅ
Ս. ԱՍՐԳՈՒՅՆ ՏՕՆԻՆ ԱՆՈՒՅՈՎ ԴԵԼԿԱ
Պուրճ Համուտ, Արաքս փողոց
Հեռ.՝ 01-261475

SARKIS & HAGOP LOUSSARARIAN
ՎՃԱՐՄԱՆ ԴԻԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ
3 ՏԱՐԻ ԱՈՒՆՅ ՏՈԿՈՍԻ
ՅԱՆՉՆՈՒՄ 8 ԱՄԻՍԵՆ
ԵՐԵՎԱՆԻ ՅԱՐԿԱՐԱՄԵՆԻՆԵՐ
ՊՄԱԼԻՄԻ ԲԱՐՉՈՒՆԵՐԻՆ ՎՐԱՅ
Ծովահայից
2 կամ 3 Անջասնեակ
Հիրասնեակ
Ճաշասնեակ
Երկու քաղնիք
Կահաւորում խոհանոց
Զրհոր
Սեւ ալիմիմիոմ
Կառապոմ
Store roulant
Generatore
Videophone
Antenne collective
Tel: 961 4 712409 - Mobile: (03) 201957 - 201967 e-mail: sohalco@dm.net.lb Antclias - Lebanon